



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

17 սեպտեմբերի 2014թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով «Ծովագարդի «Նայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Ծովագարդի «Նայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «...ճանաչել ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը ՆՏ Սահմանադրության 6-րդ եւ 31-րդ հոդվածներին, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 246-րդ հոդվածի երկրորդ մասը, 255-րդ հոդվածի յոթերորդ կետը եւ 249.1-րդ հոդվածը ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածին, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածին, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը եւ դրա իրավակիրառ պրակտիկան ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 91-րդ, 14.1-րդ, 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը միաժամանակ ներկայացրել է միջնորդություն իրեն պետական փութի վճարումից ազատելու մասին:

1. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներից, մասնավորապես ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը, չպարունակելով դատավարական գործընթացում հիմքերի նույնությունն ստուգելու կոնկրետ կառուցակարգ, առաջացնում է դատարանների կողմից «կամայականությունների» կիրառման հնարավորություն՝ ուրնահարելով անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Դիմողն իր դիմումում ներկայացրել է նաև այլ փաստարկներ:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննությունը մերժելու հիմքեր՝ հետևյալ պարճառաբանությամբ.

դիմողի կողմից վիճարկվող՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 246-րդ հոդվածի 2-րդ մասը, 249-րդ հոդվածը, 249.1-րդ հոդվածը, 255-րդ հոդվածի 7-րդ կետը և 305-րդ հոդվածը դիմողի նկատմամբ չեն կիրառվել, դրանք դիմողի նկատմամբ կիրառվել են Երեւան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԴ/2632/02/11 քաղաքացիական գործով 2012թ. մայիսի 21-ի կայացրած դատական ակտով, որն օրինական ուժի մեջ է մտել 2012թ. նոյեմբերի 21-ին, որից հետո դիմողը «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում չի իրացրել սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը:

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Մասնավորապես, դիմում կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական այն անձը՝

- որն ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից է հանդիսացել, և

- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ, և

- որի նկատմամբ օրենքի վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով, և

- որն սպառել է դափական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած անձը սահմանադրական դափարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ինչ վերաբերում է ՆՏ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետին, ապա դիմողը չի ներկայացրել վերջինիս ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պարզաճ իրավական հիմնավորումներ: Մասնավորապես, դիմողի փաստարկները վերաբերում են ընդհանուր իրավասության դափարանի կողմից օրենսգրքի վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափությանը, ինչպես նաև ընդհանուր իրավասության դափարանի կողմից իր գործով կայացված դափական ակտի իրավաչափությանը: Ներելաբար, դիմողի փաստարկները սահմանադրական վեճ առաջացնելու առումով անհիմն են:

«Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համապետքստում ՆՏ սահմանադրական դափարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պարճառահեղանակային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և սահմանադրական դափարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վերոհիշյալ նորմի հակասահմանադրականության վիճարկմամբ: Այսինքն՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ եւ 7-րդ մասերով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Ծովագարդի «Նայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝